1137

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«04» 02 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 021 - 25

Նախաձեռնող՝ «Դիլի» ՍՊԸ
Երևան, Շիրակի փ. 4/12

Գործունեությունը՝ Դիլիջան համայնքի տարածքում նոր անասնաֆերմայի, կաթնամթերքի արտադրամասի և կենսագազի կայանի կառուցում
Տավուշի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 021 - 25

«04» փետրվարի 2025 թ.

Դիլիջան համայնքի տարածքում նոր անասնաֆերմայի, կաթնամթերքի արտադրամասի և կենսագազի կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԴԻԼԻ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Ներածական մաս. «Դիլի» ՍՊԸ-ի կողմից Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Վ. Անանյան փողոցի 46/2 և 46/3 հողամասերում նախատեսվում է կառուցել նոր անասնաֆերմա, կենսագազի կայան և կաթնամթերքի արտադրամաս (այսուհետ՝ կառուցապատում): Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 2,7721 հա մակերես: Հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Կառուցապատման նախագիծը կազմվել է Դիլիջանի համայնքապետարանի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 16-ին տրված թիվ Ա1-148 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

Նկարագրական մաս. Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվող գործունեության տարածքը տեղակայված է Դիլիջան քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում, բավականին մեծ թեքությամբ բլրային հողատարածքի վրա, Մ 8 ավտոճանապարհից մոտ 1,6 կմ, իսկ մոտակա բնակելի շինությունից՝ 130 մ հեռավորության վրա: Տարածքի հարևանությամբ գտնվում է «ԴԻԼ» կաթնամթերքային համալիրը, որը «ԴԻԼԻ» ՍՊԸ-ն ներկայացված նախագծի համաձայն նախատեսում է ընդլայնել:

Համաձայն նախագծի՝ շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 12760 քմ, ինչը հնարավոր է ընդլայնել մինչև 13500 քմ: Անասնագոմի շինությունը զբաղեցնում է 5749,7

քմ, որը նախատեսված է 500 գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար: Կաթնամթերքի արտադրամասը զբաղեցնելու է 3742 քմ տարածք: Նախատեսվել է կառուցել նաև 140 քմ ընդհանուր մակերեսով հենապատ, ճանապարհներ, հարթակներ և իրականացնել տարածքի հարթեցում: Նախատեսվում է կառուցել 250 կՎտ էլեկտրական դրվածքային հզորությամբ կենսագազի կայան: Տարեկան 8300 ժամ աշխատանքի դեպքում կայանի արտադրողականությունը կկազմի 1707750 կՎտ/ժ էլեկտրական էներգիա (օրական՝ 4950 կՎտ/ժ): Էլեկտրաէներգիայի նշված քանակն ապահովելու համար ընկերության կողմից նախատեսվում է օրական 52 տոննա գոմաղբ: Նոր անասնաֆերմայում կթվող կովերի քանակը կազմում է 130, կաթնամթերքի օրական արտադրողականությունը՝ 2,5-3 տոննա: Նախատեսվում է կթվող կովերի քանակն ավելացնել մինչև 600-ի, որի դեպքում արտադրողականությունը կհասնի մինչև 15 տոննա:

Անասնագոմի վերջնամասում կառուցվելու է բետոնյա հոր, որտեղ կկուտակվի ողջ գոմաղբն ու դրա մեջ պարունակվող կեղտաջրերը, որտեղից էլ փակ շնեկային փոխակրիչով կտեղափոխվի կենսագազի կայան: Օրական մեկ անգամ նախատեսվում է իրականացնել հորի մաքրման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Փորձաքննության գործընթացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր համայնքում (Դիլիջան համայնք) անցկացվել են հանրային լսումներ: Համայնքը տվել է նախնական համաձայնություն նախատեսվող գործունեությանը:

Պատճառաբանական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ նախատեսվող գործունեության վերաբերյալ ավագանու որոշման առկայությունը պարզելու նպատակով հարցում է կատարվել Դիլիջանի համայնքապետարանին, ինչի վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չստացվելու հետևանքով համայնքապետարանի դիրքորոշումը համարվել է դրական: Այնուհետև, փորձաքննության գործընթացում ներկայացվել է Դիլիջան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 5-ի N 823-Ա որոշումից քաղվածք, որում համաձայնություն է տրվել ոչ թե նախատեսվող գործունեությանը, այլ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացմանը: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքներն ամփոփվել են, ներկայացվել են մի շարք դիտողություններ և հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման նպատակով: Ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակվել է թերի, մի շարք կարևոր հարցերի չեն տրվել սպառիչ պատասխաններ:

Փորձաքննական հիմնավորումներ

Նախատեսվող գործունեության իրականացումը չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից, իսկ հաշվետվության լրամշակված տարբերակում առկա են մի շարք թերություններ և հակասություններ, մասնավորապես՝

1. նախատեսվող գործունեության իրականացումը հակասում է «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներին, որով սահմանվում են Դիլիջան քաղաքային բնակավայրում և հարակից տարածքներում արգելված գործունեության տեսակները: Համաձայն օրենքի՝ Դիլիջան քաղաքային բնակավայրի գոտիավորման նախագծերով առանձնացված տարածքներում արգելվում են անասնաբուծությունը և մշակող արդյունաբերությունը,
2. փորձաքննության ներկայացված փաստաթղթերի փաթեթում բացակայում է Օրենքով սահմանված Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի եզրակացությունը, ինչը պահանջվել է հաշվետվությունը լրամշակելիս: Նշված պահանջին ի պատասխան ներկայացվել են 2005-2007 թթ. Դիլիջանի քաղաքապետի կողմից տրված շինարարական թույլտվություններ և այլ փաստաթղթեր, որոնց գործողության ժամկետն ավարտված է,
3. նախատեսվող գործունեությունը հակասում է Կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի ««Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» թիվ 190 որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջներին, որով նախատեսվում է մինչև 2026 թվականը պարկի տնտեսական գոտին 42,3 տոկոսից հասցնել 29,7 տոկոսի, իսկ «Դիլիջան» ազգային պարկը դարձնել որպես ճանաչված բնության հատուկ պահպանվող տարածք և լիովին համապատասխանեցնել Բնության պահպանության միջազգային միության կողմից 2-րդ կատեգորիայի համար սահմանված չափորոշիչներին: Որոշման համաձայն՝ «Դիլիջան» ազգային պարկի էկոհամակարգերի և կենսաբազմազանության հիմնական սպառնալիքներից է կենդանիների արածեցումը, ինչն անասնաֆերմայի շարունակական ընդլայնման պայմաններում կարող է առաջացնել լրացուցիչ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա,
4. հաշվետվությունում առկա են հակասական տեղեկություններ անասնաֆերմայում առաջացող գոմաղբի քանակների միջև, կենսագազի կայանի բոլոր հաշվարկները կատարված են օրական 52 տոննա քանակությամբ գոմաղբի համար, ինչի առաջացումը գործնականում հնարավոր չէ հաշվետվությունում նշված 500 գլուխ խոշոր եղջերավոր անասունների պահման դեպքում (լրամշակումից հետո և հանրային 2-րդ լսման ընթացքում ընկերության կողմից չի հիմնավորվել օրական 52 տոննա գոմաղբի առաջացման հնարավորությունը),
5. հաշվետվությունում նշված տեղեկատվության համաձայն՝ մոտակա բնակելի տարածքը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 130 մետր հեռավորության վրա, ինչը հակասում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024

թվականի փետրվարի 1-ի թիվ 06 հրամանի հավելվածով հաստատված՝ նշված գործունեության համար սահմանված սանիտարապաշտպանիչ գոտու չափերին (գոմաղբի և թրիքի փակ պահեստարաններ՝ 500 մ, 1,2 հազար գլխից պակաս խոշոր եղջերավոր կենդանիների ֆերմաներ՝ 300 մ):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասի 3-րդ կետը և հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի տարածքում նոր անասնաֆերմայի, կաթնամթերքի արտադրամասի և կենսագազի կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Քրիստինե Հարությունյան